

նակ - և խորունակութիւն հովուապետ-
տացն Հայաստանեայց Ս. Եկեղեցու
ի թագէտ և Բարթոլոմէոս առաք-
եալներէն մինչ ցոտրէն Գրիգոր Լու-
սաւորիչ հայրն մեր, այս ընտիր գործ-
որուն մէջ կ'պարունակի բաւական հը-
նութիւններ աւաշխատասիրած է Երու-
սաղէմայ միաբաններէն Արժ. Բառնա-
բաս վարդապետը այժմ' ի իրոյ ընծայ-
ուած է Գաֆաֆեան եղբայր տպարա-
նէն. կ'գտնուի ամեն գրալաճառաց
քով ի գին հինգ զուրուշ :

չիւրհէսիզ պիր թագաւմ հէր իտարէ-
լէր, օրտու վէ տօնանմա մէսարիֆա-
թընըն էքսիթիմէսի իշին, Պէրլին
միւլագաթընը կէօսթէրէճէքլէր տիր:

Ասքէրլէր, վէ կէմիլէր, էկէր պիր
կիւնտէ մուսթագամ պիր հալէ վազ
օլոււնապիլսէ իտի, մէսարիֆաթըն թէն-
զիլինէ րազի օլուր իտիք: Յագաթ, 1873
վէ եախօտ 1874 սէնէսիւնտէ մու-
հարէպէնին վուգուի ինթիմալտէն տէ-
յիլ մի: Պէրլին միւլագաթըն, ասլա
եւրէյիմիզի րազաթլաթտըրամազ,
ինկիլթէրրաւնըն, հէր վագաթ, հա-
զըրտա ագճէսի, օրտու վէ տօնանմա-
սը պուլոււնմալը տըր, իւշ իմքէրա-
թօրլարըն միւլագաթընտան իշթէ պու-
նէթիճէյի չըգարըրըզ:

—Յրանսանըն միլլէթ մէճլիսի վա-
գանցաւընը թէքմիլ իտիպ, էէնիտէն
թէճէմիլի իլլէտիքտէ, գապինէթօնու-
քիւրսիի հիւքիւմէթիին, Բարիսէ նագլ
իտիլմէսիի թալապ իտէճէյի թէվա-
թուրու սահիլէնչմէքտէ տիր:

Պէրլէ պիր գարար վիրիմիլ օլուսը-
նա տէիլ ատտ օլոււնապիլիւր Մ. Թիէ-
րին Բարիստէ վագաթ էլիլէ սարայըն-
տա իգամէթ իթմէսի:

Գամարա, բայիթախթտա օթուր-
մուշ օթուրմամըշ, չօգուգ էէնմիլլէթ
վիրիլը պիր շէյ տէյիլ տիր, զաթէն
եազընտա, մէմուրիլթի իրտմէթի խի-
թամպուլաճագ օլուպ, էէրինէ կէշէն
գապինէթօ, շիւրհէսիզ, Բարիստէքի
Պուրպօն սարաբընը քէնտիին թէճէմ-
միւլեւհէ իթթիլապ իտէճէք տիր:

Պիր վագաթտան պէրու, էն գիւտտէ
էսրար սագլանան մալիւմաթլար, մէ-
մուրին թարափընտան լագէթալար վա-
սըթաւըյա նէշը իտիլլէքտէ օլուպ,
Ֆագաթ մէրգուման մէմուրլարըն քիմ-
լէր օլուրգարըն անլաշըրմամըշ տըր:
Նասըլ քի պու տէֆա, վիւքէլա մէճ-
լիսիինին միւլագաթըն վէ վիրտիլի
գարարլար, ֆէրտտըր կիւնի չըգարը-
լան ինտէքանտան Պէրլէ զագէթասըն-
տանօգթասըն նագլ օլոււն-
մուշ, պատէհու իմքէրաթօր Ալէքսանտ-
րըն, Յրանսա հագգընտա սէյլէտիլի
սէօղլէր, վէ վիրիլլէրէ տայիլ նօթա,
զագէթալար վասըթասը իլէ նէշը օլոււն-
մուշ տուր:

Տախիլլէ նագըրը մէքքիւր էսրար
նէվիլտէն հալաթիսլէրի, զագէթաճը-
լարա պիլտիլլէրի պուլմագ իշին պիր
թէֆթիլ շալմը օլուպ, զահիլէ չըգան
գապանթա սահիլպիլլէրի, հէր քիմ օ-
լուր իսէ օլոււն, շէտիտէն ճէգալարըն
վիրէճէք տիր:

—Յրանսանըն հէքիմիլ ագատէ-
միասը թարափընտան նէշը օլոււնան
պիր րաբօրթօտա օգոււտուղոււնա նէ-
գարէն, հէր նէ ճինս գէհիլլէ օլուր ի-
սէ օլոււն, պիր ատամ գէհիլլէնտիք-
տէ, անիտէ, չօգ քլըգ սու իշտիլին-
տէ, միտէսիին կիրէն գէհիլլէ գու-
սուպ գուրթուլուր, քէղա գօլէրա-
տան թուլթուլանլար տախի, այնի թա-
րիլլէ գուրթուլուրլար իմիլ:

—Պու տէֆա, նէքէսիլի իլէ քէս-
պի շէօհիլթ իթմիլ օլուր Ռ. Նամ պան-
քէր վէֆաթ իթմիլ տիր:

Պու ատամ պիր բանթալունու, թամ
28 սէնէ կիլմիլ տիր, գըշըն, մէքքիւր
բանթալունու, բամպուգ աթաթըրը
վէ եազըն բամպուգ չըգարըպ էօյ-
լէճէ կիլլէր իմիլ: Ճան շէքիլտիլի վա-
գըթ, պիր բարասըն, գարըքնա թէ-
սէլի վիրտիլլէր կէօրտիւքտէ, գարը-
քնա խիթապէն, «գարըքնալըմ, պէնի
տիլլէ, էկէր բարաս էֆէնտի, պէնի
քաւտրանտան չըգարըպ իշին տուա
իթմէքլիլի սանա թէքլիլ իթմէքտէ

խէ, օլմահա քի օնոււն իշին պօշ էէ-
րէ մէս: րիֆ իտէրէք փարատան չը-
գասըն, պէն քաւարանտա վատէմի
թէքմիլ իտէրիմա աէմիլ տիր:

ԱԶԳԱՅԻՆ

ԵՕԶՂԱՏՏԱՆ ԹԵԼԷԿՐԱՖ

Պու կիւն ալտըրմըշ շու աթիտէ-
քի թէլէկրաֆ իւզէրինէ բաթրիքիւա-
նէնին նագարը տիգգաթընը տալէթ
իտէրիլ:

Արիստակէս եպիսկոպոսուն պու-
րատա պագը գալմասընը չէնտ ֆէ-
սատլարտան մատա, քեաֆֆէյի միւ-
լէթիմիլ խօշուտիինէթլէ արգուլէտիլի-
նի չէնտ տէֆա, մէքթուպլար վէ թէ-
լէկրաֆլարա բաթրիքիւանէէն արդ օ-
լոււտուղու կիպի, պու թարիլս երնէ
թէլէկրաֆ վէրիլտի. բաթրիքիւանէէն
պիգգաթ սէյլէյի Արիստակէս էֆէն-
տի իպգա օլմատըգճա, միլլէթ էլտէն
կիտէճէք:

(Մէճլիսի էրմէնիեան)

ԷՐԶՐՈՒՄՏԱՆ ԹԱՀՐԻՐԱԹ

Կարին 14 սեպտ. 1872.

... Խմբագիր,

Հիտեւեալը ձեր ազգօգուտ թեր-
թին միջոցաւ հրատարակելիդ կը
խնդրեմ:

Կարնոյ Հայոց վիճակը, Ազգայնոց ձայ-
նը, դէպքեր, հրդեհ, աքսորուած ֆիւր-
տերու դարձը, բանտի ելած ֆիւրտերն,
օգոստ. 28 փաստըրմաճեանի խանի հրդե-
հը, Մէքցուց կողպուտիլն, փաստըրմա-
ճեան խաչատուր էֆէնտիլի շարաֆար սպան-
նուլին, այն աւուր մէջ պատահած դէպ-
քերն են:

Ինչ վիճակի մէջ են Կարնոյ բնակիչը,
ուր ոչ մարդկութիւն ոչ տաղանդ ոչ
հանճար և ոչ կեանք կը յարգուի. այլ
միջին գարու պօքալի և վիսաթկար
սովորութիւնները իրեն Աստուածային
սրբազան պատուէրներ ճշդիւ կատար-
ուելու մեծ փոյթ կը տեսնուի. պար-
զօրէն բռնմ, Կարնոյ շատ կողմերը ուր
որ մտնես առջև թշուառութեան տե-
սարան մը կը բացուի. բազմաթիւ ժո-
ղովուրդներ գերի են տգիտութեան,
գերի են խոշոր անուններու, գերի են
մահաբոյր սովորութեանց. մարդկային
վարչութեան սանձը բանալարութեան
ձեռքը չէ, այլ կրօնամոլութեան եւ
զրկանաց ձեռքն է և կը թողում այս ձե-
քուրածքը, ինչ որ պէտք է գայն դը-
րել, ոչ ճարտասանական ձեւերով, այլ
պարզ և ճշմարտապէս, յիշելով Աւե-
տարանի այս վճիռը թէ «ճշմարտը
խօսեցէք, ճշմարտութիւն ձեզ կազատէ
են»:

Կարնոյ Հայոց քաղաքական վիճա-
կը արտասուուայ արժանի է, ինչպէս ա-
մէն Հայ նոյնպէս Կարնոյ Հայր հա-
րիւրաւոր տարիներէ մինչև ցարգ ի-
րան միակ վեհապետ կայսր ճանչցած
է Օսմանեան բարեխնամ տէրութիւնը,
և իր ամենախորին հպատակութիւնը
ամենայն հաւատարմութեամբ նուի-
րած է. Հայը իր անձնական շահէն նա-
խապաւոր համարած է կայսեր շահը,
թէեւ մեր Կայսերական բարեխնա-
կաւարութեան արդար օրինաց չը-
նորհքներն լիւրի կը թափուին հպա-
տակաց վրայ, բայց Կարնոյ Հայ
մեծաւ մասամբ գուրկ է այն մեծ շի-
նորհքները վայելելէ առաջին գաւա-
նեւուն մէջ, կառավարութեան գուրպ
անցած պաշտօնեաներու ումանց եւ-
սէն որք հպատակ ժողովրդոց վրայ
գուրկ է խնամը չունին հակառակ մը
օգոստափառ Կայսեր կամաց, որուն
արդար օրէնքներն հաւաւար ի գոծ

չեն դներ. «Երկրորդ» ժողովուրդը տը-
գէտ, օրինաց անտեղեակ, խօսելու
համար անեղու, ձայներն խեղդուած,
վասնորոյ միշտ զրկուած, և միշտ ի-
րաւունքներն կորսնցուցած. չը յու-
սացուիր թէ կարինը ամէն գաւառներ-
րէ աւելի բարեկարգուած է, և մեր
բարեխնամ Կայսեր կամացը համաձայն
խաղաղութիւն անխորութիւն թագա-
ւորած է, և այսպէս եղած է կը հաս-
կըցուի տէրութեան. մեք ալ կը վկա-
յեմք թէ քանի տարի յառաջ այնպէս
էր ինչպէս կը կարծուէր, բայց հիմայ
ոչ, կառավարութեան մէջ գտնուող
ոմանց մոլեռանդութեամբը Տաճկաց
և ֆրիստոնէից մէջ խտրութիւն և ա-
տելութիւն ձգուած է, որուն հետե-
ւութիւնը վնասակար է. ազգայնոց
ձայնը խեղդուած է կըսեմ, վասն զի
երկրորդ պաշարուած են, քահանայք
ժողովրդոց տուններն երթալու ատեն-
նին կը քարկոծուին, ննջեցեալ բերած
առններն կը հայհոյուին. նոյնպէս բու-
լոր Հայերն ենթարկուած են այսպիսի
հալածանաց և նախատանաց թէ փողո-
ցի մէջ և շուկայի մէջ, դպրոցի տղաք-
ներն ահով դողով շատ անգամ ծեծ-
ուտելով դպրոց կերթան կուգան. հա-
պա կիները բաղնիքներու մէջ ինչ կը
քաշեն. ծեծ, խաչի կրօնքի հայհոյու-
թիւն են. այս ամենը կառավարու-
թեան խօսուած է, բայց ոչ յուրած և
ոչ բանի տեղ դրուած շնորհիւ միւ-
ֆէթիլի հիւքէմի և զապտիաներու
գլուխ հազարապետին, որոնք հին մա-
լեռանդութեամբ կը վարուին ֆրիստո-
նէից հետ, և յաչս Տաճկաց ատելի և
թշնամի կերեւցուցեն. կեալուր բառը
սովորական է թէ կառավարութեան
մէջ և թէ դուրսը, երբ ֆրիստոնէայ
է բողոքէ կառավարութեան, վկայ
կուգեն, Տաճիկներն չեն վկայեր, ֆը-
րիստոնէից վկայութիւնն ևս չընդու-
նուիր, անմիջապէս բողոքող ֆրիստոն-
եան կը վռնուի անսրբաբար:

1869 թիւ Կարնոյ կուսակալ խմա-
լիլ բաշայի ձեռամբ Մշոյ և ուրիշ կող-
մերու հարստահարիչ բռնաւոր ֆիւր-
տերն կայսերական բարձր հրամանաւ
աքսորուեցան այլ և այլ տեղեր, որով
ժողովուրդը նոր ի նոր շունչ առած
խաղաղութեան մէջ էր. յանկարծ
այս օրերս յիշեալ աքսոր գնացող
ֆիւրտերէն 28 հատ հրամանաւ վերա-
դարձան. սոցա վերադառնալուն հա-
մաւօտ տեղեկութիւնը բնիկ վառնա-
ցի խի էֆէնտի անուն անձ մը 32.000
ղշ բազար կընէ վերադառնալուն հը-
րանանագիրն առնելու, կուգայ Կա-
րին, և անկէ 'ի Մուշ, Մուշի կառա-
վարութեան կերպով մը ֆիւրտերու
անմղութեան մազաթա մը կառնէ
և Կարին բերելով Կարնոյ վէլիէթը կը
հաստատէ, Պոլիս տանելով ազատու-
թեան գիրն կը հանէ նախորդ եպար-
քոսի օրովը, և հիմայ ֆիւրտերն Կա-
րին գալով յիշեալ Ալի պէյն ալ հետե-
րէն եկած է յիշեալ գումարն առնե-
լով. մեծ ուրախութիւն է բոլոր ֆրիստո-
նէից Կարնոյ մէջ մնալով իրանց տեղերն
գնացին. 14 հատի չափ բռնաւորներ,
որոնք ալ ատենէն քաղաքիս բանտը
դատապարտուած էին, որոնց գլխա-
ւորներն են Ֆէլմէզ, Չաւազ, Մուրօ,
և ասոնք տէրութեան օրինաց բոլոր-
վին անհնազանդ և ապստամբ, սոքա
ալ քաղաքիս կառավարութեան անդա-
մոց ոմանց շնորհիւ ազատեցան և գը-
նացին իրանց տեղերն. տալ երկինք
որ այս ֆիւրտերն իրանց կրած փոքր
ինչ պատիճէն փոքր 'ի շատէ զգաստա-

նային և մեր օգոստափառ Կայսեր զօ-
րութիւնը յիշելով դադարած բլլին
իրանց չարագործութիւններէն, եթէ ոչ
վայ եկած է այն տեղի Հայ բնակչաց
թէ ինչ պիտի քաշեն:

Օգոստոս 26 փաստըրմաճեան խաչա-
տուր էֆէնտիի Կիււնի դուռ բուռած
տեղը նորաչէն կառուցած խանին թըշ-
նամութեամբ կրակձգելով երեք ժամ
ուան մէջ բոլորովին մոխիր դառնալն.
խանին այրուիլն երեկոյեան ժամը 12
ին սկսուաւ. կառավարութեան կողմա-
նէ թէ և զօրք և պաշտօնակալներ ե-
կած էին, բայց ոչ օգնութիւն մը բ-
րին և ոչ թողին ուրիշներն օգնելու. այն
հրդեհին աղետալի գիշերն Գեր. Երե-
միա սրբազանին հետ ներկայ էի, որ
թէ տաճիկ ժողովուրդներէն մաս մը
և թէ կառավարութեան զապլիաններն
Հայոց կը ծեծէին, որոնք օգնութիւն
կուգէին բնել, բսելով (գօ) վերին քեա-
ֆիր կեալուրուն մալի ետնսն, կեա-
վուր քիմ տիրքի միւլքի օյա.) երբ այս
խօսքերն լսեցի սիրտս խիտ ցաւելով,
ուզեցի պատասխան տալ. մէկ խիտ
ապտակով մը բերանիս մէջ մնաց խօս-
քըս, այս հրդեհը յայտնի թշնամու-
թեամբ բրին, և առաջինն էր:

Մեպտ. 8, ինչ հատ Մուշի դաշտե-
ցի «սիլաճիներ», որոնցմէն մէկ քանին
12 տարի, մէկ քանին ութ տարի,
ուրիշներն վեց տարի, իրանց կեանք
օտարութեան մէջ անցուցնելով, դար-
ձած են հայրենիք ուրախութեամբ 'ի
հայրենիք կերթան յուսով. Կարնէն կը
մեկնին. երեք ժամ հեռի փալան թէօ-
քէն բուռած լեռան քով դիմեալ ֆիւր-
տերն (որոնք աքսորէն դարձած ֆիւր-
տերուն դիմաւորութեան եկողներն
են) կ'յարձակին վրանին, կը կողպտեն
մերկամարմին կրնեն. և ջորեպանը կը
վիրաւորեն դէմ կենալուն համար, և
այսպէս ջորեպանը ձիւ վրայ կապե-
լով քանի ընկերներով խնուս կը փախ-
չին. ասոնցմէ ձայն դեռ չկայ. չորս
ընկերն Կարին եկան, որոնց մէկն, որ
12 տարի պանդխտութիւն քաշած էր,
աղբէն վիրաւորուած էր, ընկերնե-
րովն կառավարութեան բողոքեցին,
կառավարութիւնը լաւ գիտէ նոցա վը-
նասը, դեռ չկրցայ տեղեկանալ, զապ-
թիայի պին պաշին թէնոր ուզենայ փոյթ
ընդ փոյթ կրնայ գիտնալ և մարդիկն
ձեռք բերել. չեմ ուզեր առ այժմ'նու-
րա վրայ խօսիլ:

Փաստըրմաճեան խաչատուր էֆէնտիի
վարուց պատմութիւնը խիտ համա-
ուօտիւ գրել ստիպուած եմ նախաւե-
րի ընդարձակն կը խոստանամ տետրա-
կով հրատարակել:

Խաչատուր էֆէնտիի Կարնոյ մէջ
ծնած և մեծցած է, իր հայրը Գասապ
Մ. Յովհաննէս կըսուէր, հայրն ալ ա-
ռաքինի բարեպաշտ անձ մ'էր որ տե-
սած եմ. Խաչատուր էֆէնտիին իւր հօ-
րը խանութը գասապութիւնը բրած ա-
տեն իր մեծ անձն վեհ բնաւորութիւն
կը յայտնէր, քսի որ համառօտ գրեմ,
իր բարեստութեամբը, յարատեւ աշ-
խատութեամբը անյողդող բնաւորու-
թեամբը և ջերմեանդ առաքինու-
թեամբը, իր հօրը մահուանէն ետքը
իր բնական ձիրքովն օր բոտ օրէ, յառա-
ջագիւմեց. քաղաքայիք ամեն ազգ ու-
շաղրութիւննիր դարձուցին սորա վը-
րայ, արդարեւ այնպէս երկելի հանդի-
սացաւ. իր մեծ համբաւը թէ հեռա-
ւոր և թէ մերձաւոր երկիրներու մէջ
տարածուեցաւ, պատկառելի էր յաչս
ամենեցուն. շատ տարիներէ 'ի վեր տէ-
րութեան ամեն գործոց մէջ կը դը-

նուէր, և ամենայն հաւատարմութեամբ կը ծառայէր. մեր Օսմանեան տէրութեան առաջին օգտակար մարդն էր, ինչպէս իր գործերն ամենն ալ կապա-ցուցանեն. խաչատուր էֆէնտիի անու-նը օտար տէրութեանց ևս ծանօթ էր. օգոստոսիաւ կայսրը ճանչնալով խա-չատուր էֆէնտիի առ ինքն ունեցած հաւատարմութեան լիակշիւթիւնը, վարձատ-րեց ընթացիկ սանիարի աստիճանաւ. օր քան զօր կը յառաջադիմէր ամեն գործոց մէջ, վեհաճան էր մեծագոր-ծութեան մէջ, քաղցր էր առ ամենայն մարդիկ տեսութեան մէջ, ողորմած էր առ աղքատս և առ անտէրս առատ տուրքերով որ անխորաքար ամեն աղ-գի աղքատաց կարօտելոց կառատա-ծեռներ. յոյժ ուսումնասէր էր, կը յարգէր ուսումը քիստի թիւնը. կար-ծես բարձր Հայոց երկրին մէջ մեկե-նաս մը հանգիստացած էր ամեն աղ-գաց ուսումնականաց և դպրոցաց հա-մար, որ անխորաքար առատ կը ձո-նէր:

Քաղաքիս կառավարութիւնը վկայ կը կանչեմ խաչատուր էֆէնտիի առա-տաճեռնութեան համար: Քաղաքիս հասարակաց բարոյն համար ինչ տուրք որ կատարուէր թէ անկեղծացի, թէ դպրոցի և թէ հիւանդանոցի հա-մար, առատ առատ կուտար 10,000, 20,000 և այլն: Աստուած պաշտութեան մէջ ի մանկութենէ խիստ շերտեւումը էր, որ և իր կենաց մէջ իր քրիստոնե-ական պարտաւորութիւններն արժա-նացուցաւ կատարելու փոյթ էր. եկեղեց-եաց ու վանքերէն պայծառութեան համար գումարներ կը նուիրէր, քանի քանի գիւղերու եկեղեցիներու շինու-թեան համար հաղարներով դրամ կու-տար, ասկէ զատ փայտ, կիր կը նը-ւիրէր. թող լուէ իմ տկար գրիչս այս-տեղ որ արժանապէս չի կրնար գրել. թող խօսին և վկայեն կարնոյ Գեր. առաջնորդը և թաղ. խորհրդոյ պատ-ւարժան անգամք. երբ կը դիմէին նո-րին վանքութեան դպրոցի, եկեղեցոյ և տնանկ աղքատաց համար, ինչ ու-րախութեամբ կը լսէր նոցա և որչափ մեծ առատաճեռնութեամբ տուրք կուտար. թող վկայէ Ս. Պատրիարք Հայրը, որուն ինքն ակնատես եղած ու նորա ազգասիրութեան փորձն ան-ձամբ առած է. թող ողբայ կարնոյ նորակառոյց Հոսիսիմեանց աղջկանց դպրոցը որ իր միակ բարերարը կըր-սորնոցը և երկու ամիս առաջ Գեր. Ս. Առաջնորդ Հօր և քանի մը իշխանաց ընկերակցութեամբ այցելութիւն բու-երբ աղջկանց ուսմանց ձեռագործու-թեանց սկանստես եղաւ, իր ճշմա-րիտ ազգասիրութեան շարժեալ ալ յա-յայմէ եղած ուրախութեան արտա-սոք հոսեց ըսելով. «Փառք քեզ Աստուած, ազգիս անմեղ օրիորդներն կրօնք և ազգութիւն կը քարոզեն, ահա այս է իմ սրտիս փափաքն»:

«Ազգի-դարձաւ աղջկաներուն ըսաւ, «Աղջկա-նքս, ուրիշ եղիք, Աստուծոյ երկըր-նեան օգոստոսիաւ կայսրը որ նորա շը-նորհիւ այսպէս ժամանակի հասանք, և հիմա դպրոցի մէջ կը սովորիք կրօնք, Աստուած և ազգութիւն»:

«Քաջակե-րեց խրախոյս կարգաց և հետեցող. «Դուք իմ դաւանիւնս էք, կը յուսամ յԱստուած որ այս դպրոցին ծախքը ազ-գին վրայէն պիտի վերցնեն մինչդէռ պիտի սեփականեմ», եւ այսպէս մեկնեցաւ:

«Քանի անգամ յիշեալ դպրոցի տնօրէնը կանչելով խօսած է. անգամ մը եւս ներկայ էի, աղքատ աղայոց գրքի,

ուսման կամ ձեռագործութեան վերա-բերեալ նիւթերն ինչ որ պէտք է հո-գաւ և եկու ստակներն տամ. մանա-ւանդ աղքատ աղայոց լաւ նայեցէք և այլն, և այլն: Փաստման հե-ֆէնտին տարին քանի քանի անգամ բանտարկելոց այցելութեան կերթար երկու ամիսն անգամ, առատ հաց, փիլաւ, հալվայ, միս, բաղարջ կը բաժ-նէր, որոնց հետ հինգ հինգ զշ. փարայ, գիտէ կառավարութիւնը ասիկայ. բան-տարկելոց նորա մահուանը վրայ ող-բալն և լացերն խիստ է եղեր, որոնք աղաղակելով պոռայցեր են. «Ինչ, ո՞վ պիտի տայ ասկէ ետքը այն կերակու-րներն և այլն»:

Խաչատուր էֆէնտին Չայդարայ տա-նը կից ունէր փաստըմայի ընդարձակ ֆապրիգայ մը, ուր տարին երկու հա-զարէն աւելի կով կը զենուէր. ասոնց ձիկէրը, պօկրէկը, գլուխներն, ոտքե-րը բաւրը աղքատաց բաժինն էր, որ տնտեսարար թէ տաճիկ և թէ քրիս-տոնեայ աղքատաց կը տրուէր, որոնք 200 տան չափ են. ահ, ասոնք աղետա-րով ողբացին և կուլան նորա մահուան վրայ: Խաչատուր էֆէնտին, կրեւծի դուռ բուռած տեղն բերդին աւերակ տեղերէն մեծ տեղեր գնեց կառավա-րութեան, ինչպէս որ ամեն տեղ ծախ-ւեցաւ. երբ տարւոյ չափէ նոցա շի-նութեանը կը դարձեր. շինեց նախ մէկ խան, որն որ օգոստ. 26 ին այրեցին, երկրորդ խան մը կը կոչուէր, ուր երկու անգամ կրակ ձգեցին այրելու, չյո-ւղեցաւ. խանութներ, մողազանք, և հոյակապ գեղեցիկ բաղնիք մը, որ դեռ մասամբ իւրի թերի է. և այս շինութեանց մէջ հինգ հարիւր չափ տաճիկ և քրիստոնեայ կաշխատէին, թողում և այլ շինութիւնք:

Շէխէրու-Մահլայ ըսուած էմին բաշայի հնացեալ տունը գնեց, քարերն բերաւ իր շինութեան գործածելու. այս տունն իրեն սեփական ջուր ունէր նա ալ գնեց տէրութեան օրինօք, և այս ջուրէն մէկ աղբիւր նոյն տեղը վա-րդեցող, միւսը մեծ աշխատութեամբ բերաւ իր նոր շինած խանին մէջ, նոյն թաղի տաճիկներն նախաձեռնեց շարժեալ հակառակեցան, բայց տէ-րութեան օրինաց համաձայն բան մը չի կրցան ընել, վասն զի իրաւունք չու-նէին, և ասով գրգռուեցան ի կէտ. խընդրութիւն. քանի քանի անգամ վնասներ հասուցին, խեղճ մարդ լը-ռեց և սկսաւ զգուշանալ. ինքը ա-մեն մարդու հետ քաղցր կը տեսուէր, բայց ասելի թշնամիներ ունեցաւ իր յառաջադիմութեան երեսն:

Կը թողում խաչատուր էֆէնտիի մե-ծագործութիւններն, առաքինութիւն-ներն, տէրութեան հաւատարմութեան հայտնութեան, Հայրենեաց և ազգիս օգտակարութիւններն ճարտար գրիչ-ներու, և սկսեալ նորա սպանման պատ-մութիւնը ցաւօք սրտի:

Ո՛հ ինչպէս գրեմ շուրաւ եմ, ցա-ւալի տեսարան. . . խմբագիր, ներե-ցէք այսպէս գրելու, նոյնը կաղաչեմ ընկերացող որ ներեն, հոս գրիչս կանկ կաւեռու, վասն զի դոյն և սար-սափը տակաւին կը տրեմ ինձ, ինչպէս ամէն մարդու, նոյնպէս իմ սրտի և ու-կորներուս. վերջապէս միտքս, զգա-ցումս, սիրտս և բոլոր մարմինս յուզ-ման մէջ է, վասն զի տեսարանը սոս-կալի է:

Սեպտեմբեր 9 շաբաթ օրը ժամը 12 ին ատեն փաստըման խաչատուր էֆէնտին կրեւծի դուռ բուռած մեծ հրապարակին մէջ իր նորաշին մաղա-

զային առջիկ նստած էր հեռագրատան միւտրին հետ, (հեռագրատունն փոս-տախանան սորա կալուածոց մէջն է), իր եղբայրը Ս. Սարգիս էֆէնտին դէ-մը կեցած, եղբայրը կստիպէ տուն եր-թալ, նա կը պատասխանէ կանուխ է, և կըսէ սիրտս կայրի, ձմերուկ մը բե-րէք ուտեմ երթանք. ծառային մէկը ձմերուկ բերելու կերթայ. այս միջոցին ձիււոր մարդ մը երեսը ծածկած հրա-պարակին մէկ կողմէն դուրս կելլայ, քանի անգամ ձին խաղցունելով փա-տըման հետ խաչատուր էֆէնտիի դէմը, և ձիւն վրայէն դարապինան քաշելով Սարգիս էֆէնտինն ուսին վրայէն որ գիմացը կանգնած էր, յանկարծ կը զարնէ ձախ աչքին. խեղճ խաչատուր էֆէնտին վահ կանչելով երեսի վրայ գետին կը տարածուի, և անմիջապէս իր հոգին կ'աւանդէ. զարնողը կը քաշէ ուրիշ տապանձա մը և կը գիտէ թէ մե-ռաւ, ապա թէ ոչ նորէն պէտք է զար-նէ. երբ կը տեսնէ անոնչ ընկած է, ձին կը դարձունէ և կը փախչի դէպի պոստաններն. Ս. Սարգիս էֆէնտին ետեւէն կը վազէ, քիչ մը տեղ երթալով խեղճը ուժաթափ գետին կիցայ, գիւ-ղացի մը բաւական ետեւէն կերթայ, կը դառնայ վիթխարի գազանք տա-պանձան քաշելով վրան կարճակի, հա-զիւ հազ գիւղացին ինքզինքը պահե-լով ետ կը մնայ, եղեռնագործ բարբա-րոսը կը փախչի և ինքզինքը կը պահէ. ապա բազմութիւնը հոն կը ժողովի սալ մը բերելով վրան կը դնեն գիւղի և իր տունը կը տանին. աւաղ երբ նորա ընտանիքն տեսան խաչատուր էֆէնտիի ցուրտ դիակն արեան մէջ թաթախեալ և անշնչացեալ, ինչ եղան, ընթերցողը թող խորհին, վայճառեալութիւն. ան-միջապէս փաստըման խաչատուր է-ֆէնտին զարնուեցաւ և սպաննուեցաւ շարագոյժ լուրը կը տարածուի քաղա-քիս մէջ, ժամը մէկ ու կէսն էր այս բօթալի լուրը լսեցի, և անմիջապէս փութացի խաչատուր էֆէնտիի տունը, ո՛հ տուն սգոյ, տեսարան ալետալի, այն առիւծանման մարդը անշնչացեալ արեան մէջ թաթախեալ տարած-ուած էր. ընտանիքն, եղբարքն, զա-ւակուրքը շուրջը պատած շնչասպառ չորս կողմը տարածուած են իբրեւ կենդանի մեռեալ. չեմ գիտեր ո՞ր կարծեցեալ սիրտ կրնար տոկալ, ա-մենայն ինչ լուրութեան մէջ մերթ մերթ լացի հեծկտալ կը լսուէր, ամեն ոք շը-ւարած ինչ ընելին չեն գիտեր, կա-ռավարութեան լուր կը տրուի, կառա-վարութիւնը ձիււոր մարդիկներ կը հանէ քաղաքէն դուրս զարնողը որո-նելու, փոխանակ քաղաքին մէջ վըն-տըռելու. եթէ կամք ընէր կառավա-րութիւնը այն գիշեր զարնողը անպատ-ճառ կը գտնար. նոյն գիշեր ժամը ե-րեքին հեռագիր զարնուեցաւ առ Ս. Պատրիարքն խաչատուր էֆէնտիի ըս-պանման լուրը հաղորդելով, արտաս-աւալի կը գրեմ այս տողերն, հաւա-տացէք աչքի առջիկ ներկայ ունիմ ազ-գիս բարերար խաչատուր էֆէնտիի արիւնաթաթախ դիակը և իր ընտան-եաց և բոլոր ազգիս արցունքի հեծու-թեան աղիողորմ հառաչանքներն:

Քաղաքիս Գեր. Ս. Առաջնորդ Հայրն որ Տիւարիգոմ գիւղն գնացած էր ե-կեղեցոյ շինութեան կարեւոր գործով, նոյն գիշեր այս ցաւալի դէպքը նո-րին սրբազնութեան հայրդուեցաւ. որ գիշեր ատեն լսելուն պէս եկաւ քա-ղաքը, ինքզինքը մոռցած արտա-սուօք կողբար տէրութեան և հայրեն-եաց օգտակար մեծ իշխանիս շարաշար

սպաննուիլը. կիրակի առաւօտ եկե-ղեցոյ զանգակներն տխուր կերպով հնչեցին փաստըման էֆէնտիի ըս-պանման բօթը քաղաքիս հաղորդուե-լու, և Ս. Պատրարգը ճաշու ձգուե-ցաւ, և սկսաւ թաղման հանդէսը կա-տարելու պատրաստութիւններ տես-նուիլ:

Ժամը չորսին Գեր. Ս. Հայրը հան-դերձ քահանայիւր, գնացին հանգու-ցելոյն տունը, ուր խուռն բազմու-թեամբ լեցուած էին քաղաքիս ամէն քրիստոնեայ որոնք մարդկօրէն կա-րեկցութեամբ յողմ և յարտասուս հա-մակեալ էին. հոն հանգուցելոյն տան կարգը կատարելով ըստ Հայաստանեայց Ս. եկեղեցոյ ուղարկաւորութեան հան-դէսը սկսուեցաւ տխուր և լուրի կեր-պով. զանց չեմ առներ այս գլխաւոր սրտաշարժ մանաւանդ իր ձիւկեցողի վշտալի կէտը նկարագրելը. նուիրա-կան դազաղին գլխոյն կողմանէ իր եր-կու սգգասէր եղբարքն և որդիքն կերթային հեծկտալով և կ'սամուռ կեր-պով, և ապա քաղաքիս բոլոր ազգաց երեւելիներն և անթիւ ժողովրդոց բազմութիւն մը ետեւերէն սրտաճմիկ հեծեմանօք. դազաղը ժողովրդեան բազմութեան մէջ իբրեւ նաւալ մը կը ծփար. և այսպէս Ս. եկեղեցի բերուե-ցաւ. երբ Յունաց եկեղեցոյ մօտէն կանցնէր, յիշեալ եկեղեցոյ զանգակ-ներն տխուր կերպով հնչեցին ի պա-տիւ հանգուցեալ խաչատուր էֆէնտի-ին. Ս. պատարգը սկսուեցաւ. եկեղե-ցին լուսավառուած էր, ժողովրդոց բազմութիւնը խուռն կերպով լցուած էր, նշանաւոր էր Գեր. Ս. առաջնորդ-Հօր դամբանականը որ խիստ ազգու- և սրտաշարժ արտասուալից խօսեցաւ. այս միջոցիս բոլոր ժողովուրդը ի լաց շարժեցան. եկեղեցոյ մէջ ուրիշ բան չէր լսուեր, միայն լալու ձայնը. և ա-պա եկեղեցոյ գաւիթը և տաճարին ետեւ պատրաստուած տեղը տարին հո-ղը հողին տալու, և յետ թաղման ա-մէն մարդ ի խոր վիշաւորեալ և ի սուգ համակեալ մեկնեցան:

Խաչատուր էֆէնտին անակնկալ կեր-պով զարնուեցաւ մեռաւ, գնաց յաւի-տենական անմահ աթոռին առջի իր արեան վրէժը խնդրելու. բայց այս հարուածը խիստ ծանր է Հայոց ազգիս և բոլոր քրիստոնեութեան, դուցէ ու-մանք բոնն աշխարհի մէջ ամէն տեղ այսպիսի դէպքեր շատ կը պատահին. այո՛ ես ալ կը վկայեմ. բայց ոչ այս-պիսի սպանում եղած է. եթէ պարա-գաներով պատմուի, այն ըսողներն ալ իրաւունք պիտի տան թէ այն դէպ-քերուն չը նմանիր: Արդեօք կառա-վարութիւնը ինչ միջոց ձեռք առած է չեմ գիտեր, և ինչ պիտի ընէ չեմ գիտեր. Հայոց բաղձն է այսպէս կո-րուսներն ունենալ, Հայոց ճակատա-գիրն է այսպիսի հարուածներու. եւ թարկուիլն, Տէր տեսցէ, և ողորմե-ցի. մեք Հայերս միայն մեր Օգոստո-սիաւ կայսրը արդար վրէժ խնդրութեա-նը անկախելով կըստասեմք, և ոչ թէ քաղաքիս կառավարութեան վրէժ. խնդրութեան յոյս մը ունիմք, վասն զի փորձով գիտեմք տեղոյս կառա-վարութեան դուրսութիւնը:

Մնամ վասն ձեր և այլն
Շաւարժ Բարձր Հայր

ՍԱՀԻՊ ՂԱԶԻՍԻ
ԿԱՐԱՊԵՏ Ե. ՓԱՆՈՍԵԱՆԻ
Քաղաքատա բնակչի միւր լազարներս
Ն. 29 իբրի խանդաւա